


Դուրին, Ապա Ոլորս՝ մեծ ոստիկան և ամիրապետ Ապտուլմէլիք յ85 Թուրին Տաճկաց. և ապա Վլէթ, որդի նորա. և ապա Օմար: Վահան Գողթնացի աստ նահատակի յՕմարայ ի Ռուկափ: Սահակ կաթողիկոս կենդանի 27 ամ գերի գլուղ, զնի Եղիա կաթողիկոս: Սա զՆերսէս, եպիսկոպոսն Աղվանից, և զՏէրկին աշխարհին մատեն Օմարայ զորս կապեալ տանին առ նա և սպանանեն զնոսա վասն քաղկեդոնի լինելոյն: Իսկ Հայրապետն հակառակ Օմարայ համարեալ՝ տայ սպանանել (կացեալ) չորեքտասան ամ կաթողիկոս. և ապա՝ Օհան օձնեցին, որ և զնաց առ Օմար:

« Իսկ վերոյասացեալն Աշոտ օծանի Թագաւոր ի հայրապետէն Գէորգայ: Եւ Աշոտի եղբայրն Սմբատ, սպարապետ Հայոց լեալ՝ շինէ զեկեղեցին Բագարանու. ի սկզբան սպարապետութեան իւրոյ զպճնապայծառն շինէ զեկեղեցի ի քաղաքագեօղն Կողբ քաղմածախ ամրութեամբ և ստիպով. և սակաւածամանակ եղեալ՝ մեռանի, և միւս եղբայր արքայի Դաւիթ:

« Յաւուրս Սմբատայ լինի խաղաղութիւն աշխարհիս Հայոց. կաթողիկոս՝ Յովհաննէս. և շինին քաղուս եկեղեցիք յիշխանէն Գրիգորէ, ի Սահակայ և ի Վասակայ, իշխողաց աշխարհին Հայոց. Լեւոն, Թաւադուր Բունաց, յոյժ պատուէ զՍմբատ, նաև իշխանն Տաճկաց խալիֆայ Բաբելունի, Բայց շփոթ աղմկի ի մէջ Թագաւորին Սմբատայ և ի մէջ Թագաւորին Եգերացւոց վասն Կոստանդինի. և յետոյ միջնորդութեամբ Ներսէսի իշխանին հաշտին յետ կալելոյ և կապելոյ զԿոստանդին առաքէ յաշխարհ իւր. բայց Թագաւորն վրաց զՀարեալ յաւէտ վասն յարձակման Կոստանդինի:

« Ասի յոմանց թէ Հերակլ ոչ զնաց ի պարս. այլ Թագաւորեցոյց Պարսից զԽոռոհամ, որ զնացեալ սպանանէ զԹագաւորն Արտաշիր տղայ գլուղ, որդի Կավատայ. և վաղվաղակի առաքէ գիւսչն առ Հերակլ և զօրքն Պարսից սպանանեն զԽոռոհամ: Կաթողիկոս Եղբ, որ զնաց առ Հերակլ,

զրոյց տգէտ, և ոչ տարաւ զԳնան, այլ զքեռորդին իւր, որ հաւանեալ զրեցին խորամանկութեամբ Բունաց թէ. Նըովեմբ զամենայն հերձուածօղսն բաց ի ժողովոյն Քաղկեդոնի. և տան Եղբի զերբորդ բաժին քաղաքագլուղին Կողբայ և զաղահանքն ամենայն. որ ասի յամ յամէ երկոտասան հազար զեկան էր: Սա Եղբ շինէ զհրաշագեղ եկեղեցին կոչեցեալ սուրբ Գայիանէ և զկաթողիկէն էջմիածնի, որ յառաջ փայտաշէն էր »:



ՊԱՐՍԱԿԱԶԱՅ ԱՇՈՒՂՆԵՐ

ԵՐԳԻՑ ՏԵՐ ԿԱՐԱՊԵՏ ՕԶԱՆԵԱՆ

(Շար. տես թղմ. 1922. էջ 39)

2. ԿՐՈՆԱԿԱՆ: Տէր-Կարապետի երգերը չէ սահմանափակում բարոյական-խրատական երգերով: Ընդարձակ բաժին են զբաւում նրա կրօնական երգերը, որոնց մէջ երգին արտայայտում է իր կրօնական աշխարհայեացքը, զգացումներն ու մտորումները և որոնցից երևում է որ նա ջերմեանդ հաւատացող է և իբրև ճշմարիտ քրիստոնեայ խորապէս տոգորւած է քրիստոնէութեան հաւատքի, յուսոյ, սիրոյ և զթութեան զաղափարներով: Այդ ստանաւորներից չորսը այբուբենի տառերի կարգով գրւած կրօնական գողտրիկ էջեր են, որոնց մէջ երգիչը Նարեկացու շնչով փառաբանում է և զրւատում Բարձրեալն Հօր և Յիսուս-Քրիստոսին մեծութիւնն ու հզօր զօրութիւնը, ապա ողորմութիւն է հայցում:

Աստած բարձրեալ և յոյժ անդ տէրութիւն, ինքնագոյ և զօրեղ Թագաւոր ես դու. Ողորմած և զթած Տէր բարեբար ես, Արդարագործ արանց միշտ կամարար ես, Ամենագէտ և ճշմարիտ արդար ես, Հմարտութեամբ դատող դատաւոր ես դու:

Կամ՝

Գովհալ անհուն սէր, զթած մարդասէր,
Գոչեմ առ Քեզ Տէր,
Դատաւոր փրկիչ, դատող կեցուցիչ,
Գու ես ազատիչ.
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Իսկ հինգը գրեած են Ս. Վ. Տ. Յ. Ք. տառերով. Նրանցից Ս գրով խօսում է՝ Յիսուսի վրայ և նրանից իր մեղքերի համար թողութիւն աղերսում. Վ գրով Ս. Կոյս Մարիամ մօր պատմութիւնն է անում. Տ գրով Տէր Թագաւորի վրայ է խօսում. Յ գրով՝ ճշմարիտ բաների վրայ, իսկ Ք գրով՝ «զամենեանն հոգեղինաց» վրայ:

Կրօնական այդ երգերի մէջ երգիչն ունի նաև մի շարք մեղադրական քերթածներ. դրանցից մի քանիսի մէջ նա դիմում է «անքննիւի, ուղղադատ, անաշտո, սուրբ դատաւոր Աստծուն» և ծնկաչոք, արտաուլից մխիթարութիւն, զթութիւն, խաղաղութիւն և թողութիւն է աղերսում թէ՛ իր և թէ՛ իր հօտի համար.

Թողութիւն տուր, չուն որ իմ մեղքն շատ է,
Աղաչում եմ քեզի, իմ գործքն վատ է.
Գիտեմ որ քոյ ողորմութիւն անհատ է,
Ողորմութեամբ տուր խաղաղութիւն ինձի:

Կամ՝

Հաւատացեալ եմք մենք քեզի Տէր-Յիսուս,
Խնդիրք ունեմք, որ տաս թողութիւն մեզի.
Թողութիւն եմք խնդրում, ի քէն ունեմք յոյս,
Ազգայութեանն տաս բնակութիւն մեզի:

Սակայն Տէր-Կարապետի կրօնական երգերի մէջ աւելի հետաքրքրական է «հրեշտակապետն երկնից եկաւ» խորագրով քերթածը, 54 տուն, որով նա համառօտակի տալիս է մեզ Գաբրիէլ հրեշտակի Ս. Կոյս Մարիամ մօրը յայտնութեան, Յիսուսի ծննդեան, Մկրտութեան հրաշքների, չարչարանքների և համբարձման պատմութիւնը:

Ուշագրաւ են նաև Ս. Յովհաննիսի և չորս աւետարանիչների մասին հիւսած ներբողները:

Յ. ՀԱՐՍԱՆԿԱՆ. Տէր-Կարապետի մի քանի բանաստեղծութիւնները հարսանեկան օրհնանք-գովեստներ են թագաւորի և հարսի մասին, որոնք հաւանօրէն գրեած են իր քահանայութեան ժամանակ, ինչպէս նաև նրա կրօնական ու խրատական քերթածները: Նրա հարսանեկան քերթածներէց յայտնի են ա. «Եկոյ՛րք սսեմ ամենեքեան», որի մէջ նորահարսը հրաժեշտ է տալիս հայրական տանը և երգչի բերանով առողջութիւն է մաղթում հարս. նեղրներին. բ. «Այա՛յ խնդրեմ», որով երգիչը Թագաւորին օրհնելով՝ գովում է և գ. «Այա՛ր րազատոր», որը գովասանութիւն է հարսի և փեսի. Ահա մի քանի պատմողիկներ.

Բազմեալ ես զահի դու նոր թագաւոր,
Դու ես կարմիր նուռ, ամուսինդ խնձոր.
Զձեզ պայծառ պահէ Տէրն երկնաւոր:

Կամ՝

Անսասան ապրիք, ծերանաք,
Հարիւր տարեկան ընէնաք.
Բարի զաւակով շատանաք,
Զեր ազգն անխափան ընէնայ:

4. ՕՐՀՆՅԱՔ ԵՒ ԳՈՎՆՍՏՆԵՐ: Բարեկամական սէրը թելադրել է երգչին գրել մի քանի օրհնանք-գովեստներ, որոնցից ուշադրութեան արժանի է «Ամենակոյ հայր» վերնագրով քերթածը, որի մէջ երգիչը խնդրում է Աստծուց օրհնել իր ընկերօրջը, Միւսները մի առանձին արժէք չունին:

5. ԵՐԳԻՒՆԻԱՆ: Տէր-Կարապետը երգիծող էլ է: Նրանից մեզ հասել են ընդ ամենը երեք երգիծական սրամիտ տաղեր. ա. «Ես միև աքոր ունի», որն առանձնապէս մեծ ժողովրդականութիւն է ստացել, բ. «Գևտափովն մաև ի գալիս» և գ. «Միև մարդ ինձի ստաց» և Առաջինի մէջ երգիչն այլաբանօրէն երգիծելով դրաւտում է իր աքլորին.

Ես մին աքլոր ունի շատ լաւ գովական.
Ինչ ֆայտէն, որ ջանին մին բմբուլ չունէր.

Շողոշդում էր նման ինչ արեգական,
Ելեթին ու պոչին մին թէփուլ շունէր:

Աչքերն շատ սուր էր, ըսկի շունէր լուս.
Կտուցն հինգ գազ էր, դեռ չէր եկի դուս.
Ձէնն զուռնայ սազ էր, բերնին շունէր սուզ,
Կատարն շատ ձիք էր, զլեին խուլ շունէր:

Երկրորդ՝ « Գեոտափովն ման ի գալիս »
ոտանաւորով պատկերացնում է գետափում
տեսած «այլակերպ» դազին.

Կտուցն նիզի նման էր,
Ճանկերն բլղի նման էր.
Կոթալն սագի նման էր,
Ձէնն զուռնայ սազ էր տեսայ:

Իսկ երրորդը « Մին մարդ ինձի ասաց »
մի փոքրիկ տրամախօսութիւն է, որի մէջ
երկու մարդիկ փոխադարձ երգիծելով իրար
վիրաւորում են:

6. ԱՅԼԱՔԱՆԱԿԱՆ: Միւս աշուղ-երգիչ-
ները՝ Յարթին օղու, Ամիր օղու, Ղուլ
Յովհաննէսի՝ նման, Տէր-Կարապետը ևս
հիւսել է այլաբանական մի երգ «Եղն ու
ձին» խորագրով: Եղն ու ձին գոմում
կանգնած վիճում են և միմեանց պար-
սաւում: Այդտեղ թէն խօսում է եզան ու
ձիան մասին, բայց պէտք է հասկանալ
ոչ թէ իր բուն, բառական մտքով, այլ
այլաբանօրէն. եզը-հողազուրկ շինականն
է, որ սուռաօտից մինչև երեկոյ աշխատում
է, աղնում, չարչարում, վարում, ցանում,
սակայն դարձեալ չի կարողանում իր չա-
բատանի վաստակի արդիւնքը վայելել,
իսկ ձին-կալածատէր բռնակալ խանն է,
որը թէն չի աշխատում, չի արտադրում,
բայց հանգիստ կեանք է վարում: Տեսէ՞ք
նա (ձին) ինչպիսի գոռոզութեամբ և ամ-
բարտաւանութեամբ է դրւատում իրեն.

1. Յարթին օղու և Ամիր օղու երգերը հրատարա-
կել ենք առանձին զբոսիչներով, իսկ Ղուլ Յովհաննէսի
մասին մի յօդած ուղարկել ենք Փարիզում հրատա-
րակող «Սշական» թերթին, Ա. Ե.

Ձին ասաց. մեծերն ինձ շատ են սիրում,
Ապրէշում շորերով ինձի զարդարում.
Ոսկի, արծաթ, ակներ, իմ վզին չարում,
Թփաթելուս համար թրմայալ ունեմ:

Թեղճ գեղջուկը պատասխանում է.

Եզն ասաւ. էր անբան, փուչ է զարդարն,
Թէ ես դատում չանիմ, ուստէ քոյ վարքն.
Աշխարհս բանել է իմ աշխատանքն,
Վարում եմ, աշխատում, ցօրէն կալ ունեմ:
(Շարունակելի) ԱՐԱՐ ԵՐԵՄԵԱՆ



ՀԱՌԹՈՍԻԱՆ

ԼՈՒԱՑՈՒՄՆ (ABLUTION)



Սրբախօսք յոացումն բառովս կը հասկը-
նան կրօնական այն պատուէրը, որ կը
հրամայէ լուանալ ամբողջ մարմինը կամ
մի մասը՝ սահմանեալ ժամու մը մէջ, լուաց-
մամբ՝ աստուածային հրամանով կամ ա-
ւանդութեամբ կամ բնազդով մը՝ կ'իմանան
մարդիկ որ անով իրենց մեղաց թողու-
թիւն պիտի ըլլայ և հոգինն պիտի սրը-
բուի: Հին ժամանակ Եբրայեցիք, Յոյնք,
Հռովմէացիք իրենց օրէնքներուն մէջ ու-
նէին այս պատուէրը: Այժմ դեռ ևս Հնդկք և
և Մահմետականք կը գործածեն այս նպա-
տակով լուացումներ:

Քրիստոնէից մէջ մկրտութեան սուրբ
խորհրդոյն լուացումէն զատ կան ոտնլուալի
և այլ արարողական լուացումներ, մաս-
նաւորապէս Սուրբ Պատարագի պահուն
եղածները, որոնց կը փափագինք ակնարկ
մը տալ, հետեւելով զխաւորապէս Քրիս-
տոնէական Հնախօսութեան Բառարանին
և ինչ ինչ բան յաւելլով մեր ազգային
հնաւանդ Պատարագամատոյցներէն:

Հին ատեն քրիստոնեայք սովոր էին
մեծամեծ տօներու հանդիսաւորութենէ ա-
ռաջ, ինչպէս Փասիողի կը պատմագրէ,
լուացումիւ: Այս սովորոյթս կար՝ մինչև